

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՇԻՐԱԿԻ ԹԵՄՈՒՄ

Սույն թվականի օգոստոսի 7-ին Լենինական քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում սուրբ պատարագ մատուցեց Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանը: Պատարագի հոգեպարար երգեցողությունը կատարում էր Երևանի Ս. Հովհաննես եկեղեցու երգեցիկ խումբը՝ Հարություն Թոփիկյանի ղեկավարությամբ:

«Հայր մեր»-ից առաջ Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը Շիրակի հավատացյալների համայնքին ներկայացրեց Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդին, որից հետո Տ. Գարեգին սրբազանը քարոզ խոսեց՝ «Եւ որ ոչ առնու զխաչ իւր և գայ զկնի իմ՝ չէ ինձ արժանի» (Մատթեոս Ժ 38) բնաբանով:

Այս առթիվ սրբազան հորը ուղեկցում էր Տ. Բարսեղ քահանա Ղազարյանը:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ

Սեպտեմբերի 11-ին, կիրակի օրը, Մարտունի քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցին և շրջափակը վաղ առավոտից լեփ-լեցուն էր հավատացյալներով և ուխտավորներով: Տ. Բարսեղ քահանա Ղազարյանի և Տ. Նորայր քահանա Բաղդասարյանի ուղեկցությամբ Մարտունի էր ժամանել Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանը՝ նախագահելու եկեղեցու բացման սրբազան արարողությանը:

Ժամը 11-ին սկսվեց սուրբ և անմահ պատարագը: Օրվա պատարագիչն էր Տ. Գարեգին եպիսկոպոսը: Պատարագի երգեցողությունը կատարում էր Երևանի Ս. Զորավոր եկեղեցու քառաձայն երգեցիկ խումբը:

Երկար տարիներ տաճարում տիրող լռությունից հետո կրկին նրա կամարների տակ լսվեցին հայոց անմահ պատարագի երաժշտության հնչյունները, և հոգեբուխ աղոթքներ վերառաքվեցին առ Աստված:

Հավատացյալների բազմությունը հավատքով և երկյուղածությամբ էր հետևում սրբազան արարողության ընթացքին:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ սրբազանը հայրը ծանուցեց հավատացյալներին, որ, հուրախություն հոգևորականաց և հայ հավատացելոց, բացվել է Մարտունի քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցին, շնորհավորեց նրանց այս առիթով, ապա ոգեշունչ քարոզ խոսեց՝ «Ողորմեա զեկեղեցի շինողաց՝ երախտաւորաց՝ պտղատուից՝ սպասաւորաց. և այնոցիկ՝ որք ընդ հովանեաւ սրբոյ տաճարիս են հանգուցեալ» բնաբանով: Առաջնորդ սրբազանը իր քարոզում հավատացյալներին բացատրեց քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն հռչակվելու կարևորությունը՝ վեր հանելով այն նշանակալից և կարևոր դերը, որ ունեցել է Հայ Եկեղեցին հայ ժողովրդի տառապալից անցյալում և առավելապես մեր ազգային զարթոնքի օրերին:

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն եկեղեցի շինողաց և երախտաւորաց...»:

*
* *

Սեպտեմբերի 17-ին, Մեղրիի Ս. Աստվածածին եկեղեցու բացման կապակցությամբ, Մեղրի մեկնեց Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանը: Այս առթիվ սրբազան հորը դարձյալ ուղեկցում էին Տ. Բարսեղ քահանա Ղազարյանը և Տ. Նորայր քահանա Բաղդասարյանը, ինչպես նաև Մեղրիի Ս. Աստվածածին եկեղեցում ծառայության կոչված Տ. Վրթանես աբեղա Աբրահամյանը և ուխտավորաբար Հայաստանում գտնվող, Մայր Աթոռի բարերար, լոնդոնաբնակ պրն. Ջորջ Քյուրքճյանը:

Ուղևորության մասնակիցները Երևանից Մեղրի ընկած ճանապարհահատվածում այցելեցին պատմական մի շարք հուշարձաններ, եղան Եղեգնաձորի շրջանի Նորավանքում, Գնդեվանքում, Սիսիանի Ս. Հովհաննես եկեղեցում, Շաքիի ջրվեժում, Տաթևում:

Սեպտեմբերի 18-ին, կիրակի օրը, Մեղրիի նորաբաց եկեղեցին լեցուն էր հավատացյալներով: Բացման արարողությանը ներկա գտնվելու էին եկել Մեղրիի հայ հավատացյալների համայնքը, ինչպես նաև բազմաթիվ ուխտավորներ քաղաքամայր Երևանից և Հայաստանի զանազան շրջաններից:

Ժամը 11-ին սկսվում է սուրբ և անմահ պատարագը: Պատարագիչ սրբազանը, զգեստավորված, հանդիսավորությամբ դուրս է գալիս ավանդատնից՝ շրջապատված քահանա հայրերով, սարկավագներով և դպիրներով: Քաղցրաձայն հնչում է «Խորհուրդ խորհինը», որի հոգեպարար երգեցողությունը կատարում է Երևանի Ս. Սարգիս եկեղեցու քառաձայն երգչախումբը:

Ներկաները սևեռուն հայացքով, երկյուղածությամբ և ակնածանքով հետևում են սրբազան արարողությանը:

«Հայր մեր»-ից առաջ Տ. Գարեգին եպիսկոպոսը քարոզում է «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեսուց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» (շարական) բնաբանով: Սրբազանը, ներկայացնելով ժողովրդին քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակվելու համառոտ պատմությունը, նշում է, որ վաղ ժամանակներից սկսյալ հայ շինարար ժողովուրդը եկեղեցի է կառուցել իր քաղաքում, իր գյուղում, իր ավանում և որ Հայ Եկեղեցին իր մեջ խտացրել է մեր ժողովրդի դառն պատմությունը, բնավորությունը, իղձերն ու երազները:

Իր խոսքի մեջ սրբազանը նշում է, որ մեր ժողովրդի թշնամիները մեզ ոչնչացնելու, ձուլելու համար երկու ուղի են տեսել՝ հավատքը և լեզուն: Ահա թե ինչու հայ ժողովուրդը միշտ կառչած է մնացել այս երկու անպարտելի զենքերին՝ նրանց պաշտպանության համար չխնայելով իր երկրի լավագույն զավակներին: Եվ ահա այս գիտակցությամբ է, որ մեր հոգիները այս պահին լցված են առավել խինդով և ոգևորությամբ, երբ կանգնած ենք ևս մեկ եկեղեցու բացման պատմական փաստի առաջ, որը, իհարկե, հնարավոր եղավ Վեհափառ Հայրապետի ջանքերի և հայրենի կառավարության բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ:

Հավարտ սուրբ պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն եկեղեցի շինողաց...»:

Պատարագից հետո տեղի պետական իշխանության կողմից տրվում է պաշտոնական ճաշկերույթ:

ՆՈՐԱՅՐ ՔԱՀԱՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅՈՑ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 25-ին, կիրակի օրը, վաղ առավոտից Մոսկվայի հայոց Ս. Հարություն եկեղեցին և շրջափակը լեփ-լեցուն էր հավատացյալների բազմությամբ:

Առավոտյան Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վարդապետ Կյուրեղյանը ս. պատարագ մատուցեց, որից հետո կատարվեց անդաստան Ս. Հարություն եկեղեցու բակում:

Ս. պատարագին և եկեղեցական այլ արարողություններին ներկա էին Տ. Սիոն աբեղա Ադամյանը (Բուլղարիա) և Տ. Մասիս քահանա Գալստյանը (Հայաստան):

Վերջում կատարվեցին բազմաթիվ մկրտություններ, որոնցից 105 հոգի համատեղ՝ կնքահայրությամբ մշեցի Վազգեն Թումասյանի: Մկրտվողներից միայն երեքն էին անչափահաս:

Բազմաքանակ այս մկրտության ընթացքում Տ. Տիրան վարդապետ Կյուրեղյանը խաչիկներ բաժանեց մկրտվողներին, խաչիկներ, որոնք նվեր էին ստացվել Ս. Էջմիածնից, անձամբ Վեհափառ Հայրապետի կողմից:

Մկրտվողների զգալի մեծամասնությունը ղարաբաղցիներ էին, որոնք ինչ-ինչ հանգամանքներից ելնելով բնակվում են Մոսկվայում:

Սեպտեմբերի 25-ը անջնջելի և անմոռանալի հիշողություն մնաց Ս. Հարություն եկեղեցում ներկա եղած հայ հավատացյալների համար:

ԹՂԹԱԿԻՑ





ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՂԴԱԴՈՒՄ

1988 թվականի հուլիսի 10, կիրակի.— Վարդավառ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Բաղդադի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Ավագ եպիսկոպոս Ասատուրյանի, սարկավագական կոչում ստացավ կիսասարկավագ Սարգիս Հովհաննեսյանը:

«Աստուածային և երկնաւոր շնորհս...» շարականի հուզիչ կատարումից հետո, նորընծա սարկավագը, ծնրադիր և ձեռքերը վեր բարձրացրած, հրաժարվեց աշխարհիկ կյանքից:

Ձեռնադրիչ սրբազանը իր քարոզում, խոսելով մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի պայծառակերպության խորհրդի մասին, հաստատեց նաև, թե՝ «մարդ արարածն ալ կոչված է պայծառակերպվելու Քրիստոսին նմանելու իր գիտակցական արարքով: Այսօր, երբ Սարգիս սարկավագը ուխտեց իր անձը նվիրաբերել մեր ազգային Եկեղեցվո ծառայության ի խնդիր, վստահաբար իր հոգին պայծառակերպվեցավ մեր Տիրոջ, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո և ազգի սպասավորության վեհ ըմբռնումով»:

Ս. պատարագին և ձեռնադրության արարողությանը ներկա էին նորընծայի ծնողները, ազգականները և հավատացյալների հոծ բազմություն:

Ս. պատարագից հետո նորընծա բարեշնորհ սարկավագը հավատացյալներից բազմաթիվ շնորհավորություններ ընդունեց եկեղեցում:

Բարեշնորհ Սարգիս սարկավագ Հովհաննեսյան

Ծնվել է 1963 թվականին Բաղդադում: Ավարտել է Բաղդադի ազգային համալսարանի երկրաչափական ֆակուլտետը՝ ստանալով «պսակավոր գիտությանց» աստիճան էլեկտրագիտության գծով:

Այժմ Սարգիս սարկավագը ուսումը շարունակում է Նյու Յորքի Ս. Ներսես աստվածաբանական ճեմարանում, որտեղ երկու տարուց ի վեր աշակերտում է Ս. Վլադիմիր աստվածաբանական համալսարանում:

Օժտված լինելով երաժշտական ընդունակությամբ՝ մանուկ հասակից կապված է եղել տեղի հայոց եկեղեցուն:

ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ ԲԱՂԴԱԴԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սույն թվականի օգոստոսի 20-ին, շաբաթ օրը, Բաղդադի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում, նախագահությամբ Իրաքի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Ավագ եպիսկոպոս Ասատուրյանի, կատարվեց գոհաբանական աղոթք՝ իրաքա-իրանյան ութամյա պատերազմի ավարտի և երկրում կրկին խաղաղ իրավիճակ ստեղծվելու կապակցությամբ: Հոգեպարար այս արարողությանը ներկա էր հավատացյալների հոծ բազմություն:

Բոլոր ներկաները միաբերան երգեցին «Նայեաց սիրով», «Ի Քէն հայցեմք» և այլ շարականներ:

Այնուհետև կատարվեց հոգեհանգստյան պաշտոն իրաքա-իրանյան պատերազմում զոհված 104 հայորդիների հիշատակին, ո-



1988 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻՑ ՍԿՍԵՑ ԳՈՐԾԵԼ ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՀԱՅՈՑ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՆ

ոնք իրենց երիտասարդ կյանքը նվիրաբերեցին իրաքյան հայրենիքին՝ նրա բարգավաճման և խաղաղության ի խնդիր:

Հավարտ հոգեհանգստյան արարողության առաջնորդ սրբազան հայրը քարոզ խոսեց՝ «Աղաչեա վասն մեր զաղ ի քէն Սրբոյն... Զի լոեսցին պատերազմունք, դադարեսցին յարձակմունք թշնամեաց. տնկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի» (Ժամագիրք) բնաբանով: Քարոզիչ սրբազանը իր խոսքի մեջ հատկապես ասաց.

«Հաստատելով, թե տակավին Աստվածածնա նվիրված տոնակատարության շրջանին մեջ կգտնվինք, անավասիկ ութ տարիներու մեր թախանձալիր պաղատանքներուն ունկնդրելով՝ Աստվածամայրը բարեխոսեց վասն մեր, և այսօր մենք կապրինք խաղաղության այն երանելի պահը, երբ այլևս մեր աշխատանքները պիտի ուղղվին դեպի շինարարություն մեր նպաստը բերելու Իրաքյան հայրենիքին:

Իրաքահայ մեր ժողովուրդը անցնող ութ տարիները դիմագրավեց պատերազմի արհավիրքներուն մեջ՝ միաժամանակ իր նպաստը բերելով Իրաքի վերաշինության գործին: Գեղեցկացուցինք մեր առաջնորդանիստ եկեղեցին, այժմ կառուցման մեջ է նոր գերեզմանատան մեջ Սրբոց Նահատակաց եկեղեցին, ու տակավին այլ ծրագիրներ կմշակվին՝ շրջանները օժտելու նոր եկեղեցիներով և հասութաբեր շենքերով, որպեսզի առաջնորդարանը և շրջանները ինքնաբավ ըլլան և եկամուտները գործածվին եկեղեցական և ազգային բարենպատակ գործերու օգտին»:

Արարողության ավարտին առաջնորդ սրբազան հայրը Սուրբ Սեղանից խաղաղության ողջույն բաշխեց ժողովրդին:

ԹՂԹԱԿԻՑ